

Շրջակա միջավայրի վրա ազդեցության Գնահատման հաշվետվություն /Լրամշակված/



Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջան, Գ.Հովսեփյան
փողոց 52/5 հասցեում նախատեսվող թվով 2 բազմաբնակարան
բնակելի համալիրի

Պատվիրատու՝
«ՄՈՆԵԲՐՈՍՍՈ» ՍՊԸ-ի տնօրեն

Համլետ Զարգարյան

Երևան 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	3
Ձեռնարկողի մասին տեղեկություն	3
1.1 Հապավումներ.....	3
1.2 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը	4
1.3 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	7
1.3.1 Նախատեսվող գործունեության նկարագիր.....	7
Էներգախնայողության և Էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ	9
1.3.2 Երկրաֆիզիկական ուսումնասիրություններ.....	10
1.3.3 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում.....	14
1.3.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ	14
1.3.5 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ.....	15
1.3.6 Կադրային ապահովում և շինտեխնիկա.....	17
1.3.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում	20
2. ՆԱԽՍՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ.....	23
2.1 ՖիզիկաԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	23
2.2 ԿԼԻՄԱՆ.....	26
2.3 Օդային ավազան	29
2.4 Ջրային ռեսուրսներ.....	32
2.5 Հողերի նկարագիրը	33
2.6 Հիմնային աշխատանքներ	33
2.7 Կենսաբազմազանություն.....	33
2.8 Թափոնների կառավարում.....	35
3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆԿԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	36
3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	36
3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ	37
3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	37
3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ.....	37
3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ.....	38
3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ.....	38
3.3.4 ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.....	39
Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ	40
3.3.5 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	40
3.3.6 ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ.....	42
4. ՄՇԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	46
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	47
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ/ՄՇԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....	50
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	51
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	52

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռնարկողի մասին տեղեկություն

- 1.1 Ձեռնարկող՝ «ՄՈՆՏԵՐՈՍՍՈ» ՍՊԸ
- 1.2 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Կոմիտասի պող, շ. 5, բն. 25
- 1.3 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝ ք. Երևան, Նորք Մարաշ վարչական շրջան

1.1 Հապավումներ

- ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն
- ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն
- ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.2 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Բազմաբնակարան բնակելի շենքի նախագիծը նախատեսվում է իրականացնել Նորք-Մարաշ վարչական շրջան, Գ.Հովսեփյան փողոց 52/5 հասցեում:

Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից բնակելի համալիր:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի «ա.» ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Բնակելի համալիրի աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ),
7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ),
8. << Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենք (30.05.2001թ),
9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”
10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”
11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”
12. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,

13. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:

14. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006.),

15. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),

16. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),

17. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում,

18. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում,

19. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում,

20. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում,

21. «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշումը:

22. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 6 մարտի 2002թ. N 138 հրաման «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին:

23. ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանը ՀՀՇՆ 22-04-2014

<<Պաշտպանություն աղմուկից>> Շինարարական նորմերն հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին:

24. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N 405-Ն որոշում

1.3 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.3.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

«Բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման» աշխատանքային նախագիծի համար ելակետային տվյալներ են հանդիսանում

- Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ. 30012025-01-0316 վկայականը, ծածկագիրը՝ 01-009-0090-0725,

- Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված 1.500 և 1:2000 կադաստրային քարտեզը,

- Երևանի համայնքապետարանի կողմից 01.11.2024թ ին տրամադրած n 01/50- 01-617-24 նախագծային թույլտվությունը:

Նախագծվող բնակելի շենքը գտնվում է Նորք-Մարաշ Գ. Հովսեփյանյան փողոց 52/5 հասցեում: Տեղակայված է 0,71521հա հողարածքի վրա:

Նախատեսվող համալիրին հարակից կառուցապատումները բնակելի են: Հարևանությամբ գտնվող 9-հարկանի բնակելի շենքերից համալիրի հեռավորությունը համապատասխանաբար կազմում է 16.3մ և 48.4մ: Գ.Հովսեփյան փողոցի ճակատային մասով 7 հարկանի բնակելիից հեռավորությունը կազմում է 47.8մ , իսկ դրա դիմացի կառուցապատումներից պահպանվել է 33.3մ և 59.8մ հեռավորություններ, երկայնական մյուս ճակատային մասից՝ դիմացի մեկ հարկանի բնակելիից պահպանվել է 41.4մ, լայնական մյուս ճակատից հարևան 3 հարկանի բնակելի տնից՝ 52.8մ հեռավորություն :

Պահպանելով քաղաքաշինական բոլոր նորմատիվ հեռավորությունները:

Ստորև ներկայացվում է տարածքի առկա իրավիճակն արտացոլող քարտեզ՝ հարևանկից շենք շինությունների տեղադրությամբ, ինչպես նաև արտացոլված է ենթակայանը, գազի կաթսայատունը:



Բնակելի համալիրը նախատեսվում է իրականացնել ք. Երևան, Նորք-Մարաշ վարչական շրջանի Գ. Հովսեփյան փողոցի 52/5 հասցեում: Բազմաբնակարան բնակելի համալիրի աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից թվով 2 բազմաբնակարան բնակելի համալիր:

Նախագծով առաջարկվում է՝

Կառուցապատվող ընդհանուր համալիրը նախատեսվում է երկու մասնաշենքից 6 նախամուտքերով,

-2-րդ հարկ՝ ավտոկայանատեղիներ և կոմերցիոն տարածքներ են

-1-ին հարկ՝ ավտոկայանատեղիներ, կոմերցիոն տարածքներ և բնակարաններ

1-ին հարկ՝ կոմերցիոն տարածքներ և բնակարաններ

2 - 5 հարկեր՝ բնակելի տարածքներ

Ընդհանուրը՝ 2 հարկ ավտոկայանատեղի

Կառուցապատվող շինության նախագծային հզորության տեխնիկատնտեսական սովյալները ներկայացված են ստորև:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Հողամասի ընդհանուր մակերեսը՝ 7152.1 քմ

Շենքի կառուցապատման մակերես՝ 2661 քմ 37.2%

Կանաչապատման մակերես՝ 2975 քմ 41.6%

Անջրանցիկ մակերեսը (մայթեր, աստիճաններ)-764 մ2 10.6%

Ասֆալտապատման ենթակա տարածք-751 մ2 10.5%

Շինարարական մակերես ըստ 0.00 նիշի արտաքին պատերով - 2661 քմ

Շինարարական մակերես ըստ - 7,80 նիշի արտաքին պատերով - 4240 քմ

Շինարարական մակերես ըստ - 3.90 նիշի արտաքին պատերով - 4290 քմ

Ընդհանուր շինարարական շինարարական մակերես արտաքին պատերով-20995 քմ

Բնակարանների քանակ - 123 հատ

Ավտոկայանատեղիների քանակ - 95 հատ 77,2%

- հողամասերի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակավայրերի,

- գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

Նախատեսվում է իրականացնել միաձույլ երկաթբետոնե հիմնակմախքից, արտաքինից քարի և ապակյա երեսապատմամբ: Բնակչության տեղաշարժման սահմանափակումներով խմբերի կենսագործունեության պայմանների ապահովման ուղղված անհրաժեշտ լուծումներով, շրջակա միջավայրի և քաղաքացիական պահպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման ուղղված ինժեներատեխնիկական միջոցառումներով և ՀՀ գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համապատասխան:

Հողատարածքն ունի ընդգծված ռելիեֆ, արևելքից-արևմուտք 16%-ից 17% թեքությամբ: Շենքը բաղկացած է երկու կիսանկողային և հինգ վերգետնյա հարկերից:

Ստորգետնյա հարկերում նախատեսված է թվով 95 ավտոկայանատեղի: Ավտոկայանատեղիների սպասարկումը և անցուղիները նախատեսված է հարկերի համար առանձին մուտքերով:

Նկողային հարկը ունի երկու ֆունկցիոնալ նշանակություն՝ բնակելի շենքի բնակիչների համար նախատեսված ավտոկայանատեղի և ապաստարան /թաքստոց/:

Բնակելի շենքի վեց աստիճանավանդակները և վերելակները սկիզբ են առնում ամենաստորին՝ նկողային հարկից: Ավտոկայանատեղիներից դեպի վերելակային սրահ և աստիճանավանդակ նախագծված է նախամուտք-անցուղուց:

Բնակելի համալիրը բաղկացած է 2 մասնաշենքերից, որոնց հիմքում է ընկած ուղղանկյուն ծավալ: Մասնաշենքերում նախատեսվում է իրականացնել 6 շքամուտք:

Մասնաշենքը հողամասի սահմանագծերից հեռու է տեղադրված նվազագույնը 4մ, առավելագույնը 14մ պահպանելով նորմատիվային պահանջները: Շենքի վերգետնյա կառուցապատման մակերեսը 37.2 % (0.000) է:

Տարածքի մնացած հատվածում նախատեսվում է ընդարձակ բակային տարածք՝ կանաչապատ գոտիով և բարեկարգումով: Բնակելի հարկերը նախատեսվում է -3.9 նիշից մինչև հինգերորդ +17.50 նիշը:

Շենքի ընդհանուր երկարությունը կազմում է 97.8մ և լայնությունը 42.8մ: Բնակելի շենքի տանիքը հարթ է, ջրահեռացումը ներքին կազմակերպված:

Բազմաբնակարան բնակելի շենքի էսքիզ առաջարկը մշակվել է անշարժ գույքի սեփականության վկայականով տրված տարածքի սահմաններում: Կից տարածքներով

անցնում են՝ ինժեներական գծեր և հաղորդակցուղիներ: Հողամասին կից են ճանապարհ, հարևան բազմաբնակարան բնակելի շենքեր և հասարակական կառույցներ:

Շենքն ունի հատակագծային բազմանկյան ուրվագիծ, ելնելով տարածքի ռելիեֆային բնական թեքություն: Նման տեղադիրքով պայմանավորված, տարածքի մուտքից նախատեսվում է գրոյական նիշի վրա կանաչ գոտի, իսկ մյուս կողմից երկհարկ ստորգետնյա ավտոկայանատեղի: Վերջինիս վրա նախատեսվում է խաղահրապարակ և մարզադաշտ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծի համաձայն:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում:

Կատարված աշխատանքների հիման վրա հետազոտվող տեղամասի երկրաբանական կտրվածքում առանձնացվում են գրունտների հետևյալ շերտերը վերնից ներքև՝

Երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը

Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման և արխիվային նյութերի տվյալների, գրունտների լաբորատոր հետազոտությունների ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հետևյալ գրունտներից վերնից-ներքև:

Շերտ-1 Հողաբուսական շերտ մանրախճի, ավազակավի լցնով: Գրունտն ըստ շահագործման դժվարության (9ա) I կարգ:

Շերտ-2 հրաբխային ապարների Խճաքարա-խճավազային նստվածքներ, շագանակագույն ավազային և խճային կառուցվածքի, խճի և տեղ-տեղ մանրաբեկորների պարունակությամբ ավազակավային լցնով 15-20%: Ժամանակակից դեյուվիալ-պրոյուվիալ առաջացումներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության (12) V կարգ է:

Շերտ-3 Բազալտներ ամուր, բացից մինչև գորշ մոխրագույն, տեղ-տեղ վարդագույն երանգի, թույլ ծակոտկեն և հոծ, բեկորային անջատումներով, տեղ-տեղ ծակոտկեն, խոռոչավոր, խճաքարային նստվածքների 15-30% պարունակությամբ, ավազակավային լցնումով 10-20%: Նեոգեն ժամանակաշրջանի, վերին պլիոցեն դարակարգի հրաբխային հոսքեր: Գրունտն ըստ շահագործման դժվարության (19) VII կարգ է:

ՀՀ ք. Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական Գ. Հովսեփյան փողոց 52/5 հասցեի տարածքի ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների հաշվետվության եզրակացություն:

Կատարված հետազոտությունների և ստցված արդյունքների վերլուծությունը բերել են հետևյալ եզրակացության

- Տեղամասի երկրաբանական կտրվածքը հետազոտված խորությունների սահմաններում ներկայացված է գրունտների 3 տարբեր շերտերով, որոնց ֆիզիկամեխանիկական բնութագրերի ցուցանիշները բերված են 1, 1.1, 1.2, 1.3, 1.4 աղյուսակներում:

- Տեղամասում մինչև 17 մետր խորությամբ փորված հորատանցքով ստորերկրյա ջրեր չեն հայտնաբերվել և ըստ արխիվային տվյալների դրանք գտնվում են 70մ –ից խորը հորիզոններում:

- Ուսումնասիրվող տեղամասում նախագծվող շինություն կառուցելու համար, ապահովելով գրունտների միասեռությունը, որպես հիմնատակ առաջարկվում է

շերտ 2-ը /խճաքարա-խճավազային գրունտ /

Դիմադրությունը $R = 4.0 \text{ կգ/սմ}^2$

Հարթակի գործակիցը $K_0 = 5000 \text{ տ/մ}^3$

շերտ 3-ը / բազալտներ ամուր, բեկորային անջատումներով/

Դիմադրությունը $R = 7.0 \text{ կգ/սմ}^2$

Հարթակի գործակիցը $K_0 = 60000 \text{ տ/մ}^3$

- Համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի ուսումնասիրվող տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ $A_{max} = 0,4g$:

- Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ 22.01.24 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0,7 մետր:

- Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը բացակայում են:

- Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

- Ուսումնասիրվող տեղամասում կառույցների հիմքերի փոստրակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան եզրակացությունը պարտադիր է:



Ինժեներատեխնիկական համակարգեր

Ինժեներատեխնիկական համակարգերի համար նախատեսված էներգաարդյունավետության նվազագույն պահանջները վերաբերում են՝

- 1) ջեռուցման համակարգերին
- 2) տաք ջրամատակարարման համակարգերին.
- 3) օդի լավորակման համակարգերին.
- 4) ընդհանուր օդափոխման համակարգերին կամ դրանց համակցությանը.
- 5) լուսավորության համակարգերին:

Էներգախնայողություն համար ավտոկայանատեղիի օդափոխությունը կկատարվի CO-ի ազդասարքերի միջոցով:

Բնակելի շենքի սպասարկման տարածքների գլխավոր մուտքերը լինելու են շենքերի բակային հատվածներից, որտեղից մուտքեր ապահովվում են նաև հասարակական տարածքներից:

Բնակելի շենքն ապահովված է լինելու ձայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով՝ ծխի և

ջերմային ազդանշանային ընդունող-հսկիչ սարքերով, լուսաձայնային-ազդանշանային ազդասարքերով, ապահովվելու է համակցում 911 մոնիթորինգային համակարգին համապատասխան տեխնիկական և ընդհանուր դրույթներով:

Համալիրի էներգաարդյունավետությունը նախատեսվում է համապատասխանեցնել ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին, ինչի ուղղությամբ իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց թվում են երեսպատման համակարգը, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններ և վիտրաժներ, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացում:

Ավտոկայանատեղիները ևս ապահովված են հակահրդեհային համակարգերով՝ ծխահեռացման և հրդեհաշիջման համակարգերով:

Նախատեսվում է բնակելի հարկերի միջանցքներում և ավտոկայանատեղիներում ծխահեռացում՝ տանիքում տեղադրվող օդամուղների միջոցով: Նախատեսվում է վերելակների հորաններում և աստիճանավանդակների նախասրահներում տեղադրել դիմահարման համակարգեր՝ հրդեհամարման նպատակով տեղադրել 95 հատ կրակմարիչներ: Տեղադրվելու են հակահրդեհային ազդասարքեր, վահանակներ:

Շենքն ապահովված է լինելու էվակուացիոն ելքերով:

Գազամատակարարում, բնակելի շենքի գազամատակարարումը կատարվելու է համաձայն՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված գազաֆիկացման և գազամատակարարման տեխնիկական պայմանի:

Համաձայն տեխնիկական պայմանի՝ նախատեսվում է գազի միացումը կատարել ցածր ճնշման $t=150\text{մ}^3$ տրամագծի վերգետնյա գազատարից: Գազամատակարարման համար պահանջվող գազի ճնշումը՝ 0.3(3) ՄՊա ($\text{կգուծ}/\text{սմ}^2$):

Ջերմամատակարարում. Շենքերի ջերմամատակարարումը նախատեսված է կենտրոնացված համակարգով՝ տաք ջրամատակարարման և ջեռուցման կենտրոնական կասկադային կաթսաներից: Տաք ջրամատակարարման ներքին ցանցը կատարվելու է պոլիպրոպիլենային խողովակներով՝ հատակի միջով բաշխվում է ջեռուցման մարտկոցներին: Մոնտաժման աշխատանքների ավարտից հետո ջեռուցման համակարգը ենթարկվում է հիդրալիկական և ջերմային փորձարկման, որից հետո հատակի միջով անցնող խողովակները մեկուսացվում են ռետինե մեկուսիչով: Հասարակական մասի ջեռուցումը և հովացումը ևս կիրականացվի կենտրոնացված համակարգով միջոցով:

Ջերմամեխանիկական լուծումներ. Կաթսայատուն

Կաթսայատան հիմնական ցուցանիշները

Կաթսայատան ջեռուցման հզորությունը, ՄՎտ				Տեղադրվող կաթսայի հզորությունը, ՄՎտ
Ջեռուցում	Կաթսայատան սեփական կարիքներ	Ջեռուցում, ջուր	Ընդհանուր ջերմային սպառում	
0.6294	0.0100	0,3084	0.9478	1.25

Որպես ջերմության աղբյուր օգտագործվում են 5 գազի կոնդենսացիոն կաթսաներ, յուրաքանչյուրը 251 կՎտ հզորությամբ (4 աշխատանքային, 1 պահեստային): Կաթսան փակ այրման պալատով: Այրման օդը վերցվում է սենյակից, Յուրաքանչյուր կաթսայի վրա տեղադրված է անվտանգության փական: Կաթսաները հազեցած են կոնդենսատի չեզոքացման սարքով: Կաթսաների կողային սպասարկումը չի պահանջվում, կաթսաները տեղադրվում են արտադրողի անձնագրային տվյալների համաձայն:

Հրդեհի և պայթյունի վտանգի առումով կաթսայատունը պատկանում է «Գ» կատեգորիային:

Ջերմամատակարարման հուսալիության առումով ջերմային սպառողների կատեգորիա - II.

Կաթսայատանն օգտագործվում է անկախ ջերմամատակարարման և տաք ջրամատակարարման համակարգ:

Կաթսայատունն աշխատելու է ամբողջությամբ ավտոմատ կերպով՝ առանց սպասարկող անձնակազմի մշտական ներկայության:

Հովացուցիչ նյութը ջուրն է:

Ջեռուցման համակարգի ջերմաստիճանի աղյուսակը՝ 90°-70°C:

Ջրամատակարարման համակարգում հնարավոր վթարները վերացնելու ժամանակ դիմահարդարման ջրի պաշար ստեղծելու համար տեղադրվում է 1.0 մ³ ծավալով դիմահարդարման բաք: Տանկը հազեցած է արտահոսքի սարքով և ջրահեռացման սարքով:

Սահմանված հովացուցիչի ջերմաստիճանը ապահովվում է եռակողմ փականներով:

Կաթսայատան խողովակաշարերը ջերմամեկուսացված են ոչ այրվող մեկուսիչով:

Կաթսաներից այրման արտադրանքի հեռացումն իրականացվում է ջերմամեկուսացումով չժանգոտվող պողպատից պատրաստված առանձին

գործարանում տեղադրված ծխատար խողովակների միջոցով:

Բոլոր խողովակաշարերը պետք է պատված լինեն հակակոռոզիոն ծածկով 6 2 շերտով (այբբենարան-էմալ):

Կաթսա	Միավոր	3.1-200 թթ	3.1-251	3.1-301
Կաթսայի միջին ծառայության ժամկետը, ոչ պակաս	տարիներ	10		
Ածխածնի երկօքսիդի CO-ի պարունակությունը այրման արտադրանքներում, նվազագույն հզորությամբ ոչ ավելին	մգ/կվտ × ժ	6		
Ածխածնի երկօքսիդի CO-ի պարունակությունը այրման արտադրանքներում, առավելագույն հզորությամբ ոչ ավելին	մգ/կվտ × ժ	161		
Ազոտի օքսիդի պարունակությունը այրման արտադրանքներում (NOx-ով), ոչ ավելին	Մգ/ կվտ*	46		
Ձայնի մակարդակը կաթսայի շահագործման ժամանակ,	դԲա	66.2	67.7	69.4
ոչ ավելի, քան էլեկտրաէներգիայի հատուկ սպառումը, ժամը ջերմության արտադրության ընդհանուր հզորությունը	վ	373 թ		
Մատակարարման լարումը/հաճախականությունը	V/Hz	220 վ / 50 Հց		
Ծխատար գազերի զանգվածային հոսք, Մ ծուխ	գ/ժեկ	98.82	124.03	148,72
Օդի ավելցուկային գործակից, α Կաթսայի		1.35		
հավաքման քաշը, ոչ ավելին	կգ	112		

Օդափոխություն, բազմաբնակարան բնակելի շենքի օդափոխությունը կատարվելու է խոհանոցներից, սանհանգույցներից և լոդասենյակներից՝ բնական՝ 100մմ, 0125մմ և 0160մմ օդատարներով, որոնք հորանների միջով բարձրանում են դեպի տանիք:

Ավտոկայանատեղիներից ներածման և արտածման համակարգերը տեղադրվելու են առաստաղի տակ: Օդափոխության համար համար օգտագործվելու են կոմպակտ համակարգեր, որոնք անհրաժեշտության դեպքում կփոխարինվեն նույնատիպ պարամետրերով այլ համակարգերով: Արտածումը կատարվելու է կարգավորող ճաղավանդակների միջոցով:

Ծխահեռացման օդամուղները տեղակայված են տանիքի վրա: Շենքում նախատեսված են ներածման և ծխի արտածման համակարգեր:

Հակահրդեհային համակարգ, բնակելի համալիրն ունենալու է հակահրդեհային համակարգ՝ հրդեհային անվտանգության սերտիֆիկատներին համապատասխան: Համակարգի հսկումն ու ղեկավարումն իրականացվելու է ավտոկայանատեղիում տեղադրված C2000M ղեկավարման վահանակի միջոցով: Հակահրդեհային համակարգի մալուխները տեղակայել խողովակների մեջ, նախապես պատրաստված ակոսներում Տարածքները հսկվելու են հասցեային ծխահեռացման և ջերմային ազդասարքերով, որոնք գործելու են ավտոմատ համակարգով՝ միացված պահպանային ազդանշանային

սարքին: Ազդասարքերը և ազդարարները տեղակայվելու են առաստաղների տանիքին, պահպանելով 0,555մ նվազագույն հեռավորություն լուսավորիչներից և բարձր լարման հոսանքազծերից:

Էլեկտրամատակարարում. բնակելի շենքի արտաքին էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն՝ ՀԷՑ -ի կողմից տրված էլեկտրամատակարարման տեխնիկական պայմանի/տեղ հավելվածներ բաժնում/:


Շենքում -1 հարկում նախատեսված է կազմակերպել էլեկտրավահանակային սենյակ, որտեղ տեղակայվելու են շենքի գլխավոր էլեկտրական վահանները, բաշխիչ պահարանները, ծխահեռացման և օդափոխության համակարգի ուժային ավտոկայանաւոտեղիի ընդհանուր և էվակուացիոն լուսավորության վահանակները:

Էլեկտրամատակարարման մալուխները վահանային սենյակում և ավտոկայանաւոտեղիի մասում անցնում են նախապես կառուցված սակառների վրայով, միջհարկային հատվածներում՝ մալուխային հորաններով, իսկ միջանցքներում՝ պատերի վրա, գաջի սվաղի տակ, խողովակով, ամրացված ճարմանդներով: Բնակելի շենքի ներքին էլեկտրամատակարարման ցանցը իրականացվելու է պղնձե ջիղով մալուխներով:

Բնակելի շենքի հարկերի հիմնական անցուղիներում, ավտոկայանատեղիում և աստիճանավանդակներում նախատեսված են վթարային և տարհանման լուսատուներ՝ ակումուլյատորային մարտկոցներով: Էլեկտրաէներգիայի ընդհատվելու դեպքում վերջիններս ավտոմատ կերպով միանում են իրենց մեջ ներկառուցված տեղային անկախ աղբյուրին՝ ապահովելով 2 ժամյա աշխատանքին ռեժիմ:

Նախատեսվում է շենքի ստորգետնյա -2 հարկում կառուցել նոր տրանսֆորմատորային չոր ենթակայան, որի սնումն իրականացվելու է 94748111 միացման պատվերով կառուցվող բաշխիչ ենթակայանի 10կՎ ԲՄ-ներից (ըստ «Էլեկտրական ցանցին միացման տեխնիկական պայմաններ»-ի կետ 1): Մակերեսը կազմում է 75 մ², հաշվարկային հզորությունը՝ 1200 կՎԱ:

Ինժեներատեխնիկական համակարգերի սխեմա



Շանթապաշտպանություն. Բնակելի շենքերի շանթապաշտպանությունն իրականացվելու է՝ համաձայն ՔՃ 34 21 122-87 հրահանգի: Բոլոր հողանցման և շանթապաշտպան օջախները միացվում են միմյանց եռակցմամբ: Տանիքում, մասնաշենքերի վրա տեղադրվելու են շանթընդունիչ բետոնե հիմքով, 4մ բարձրությամբ, որը միացվում է տեղադրված ցանցին:

Ջրամատակարարում, ջրահեռացում- բազմաբնակարան շենքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը իրականացվելու են համաձայն՝ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից կողմից տրված ջրամատակարարման տեխնիկական պայմանի:

Բնակելի շենքի ջրամատակարարումն իրականացվելու է ներտարածքային ցանցից է=1000մմ մուտքագծերով:

Ջրամատակարարման մայրուղային խողովակները տեղադրվելու են փակ հորաններում: Սպինկլերային համակարգի ջրի քանակն ապահովվում է պոմպակայանում տեղադրված պոմպի միջոցով: Մտող և բաժանարար խողովակները նախատեսված են պողպատե եռակցող խողովակներից $\delta=150-50$ մմ ջրազազատար խողովակներից՝ մ=32-25մմ:

Կենցաղային կոյուղի, շահագործման փուլում կենցաղային կեղտաջրերն ինքնահոս հեռացվում են գոյություն ունեցող քաղաքային կոյուղու ցանց: Կենցաղային կեղտաջրերը սանիտարատեխնիկական սարքավորումներից հեռացվում են դեպի ներտարածքային

ցանց: Կենցաղային կոյուղու կանգնակները նախատեսվում է տեղագրել փակ հորաններում, որոնք ստուգիչների մոտ ունեն սպասարկման դռնակներ՝ 400x300սս չափերի: Կոյուղու ներքին ցանցը նախատեսվում է կառուցել $\delta=100-50$ մմ տրամագծի պոլիվինիլքլորիդե խողովակներից: Ավտոկայանտեղում առաստաղի տակ խողովակները ջերմամեկուսացվում են հանքաքամքակով: Ավտոկայանատեղում նախատեսվում է տեղագրել 2 հատ դրենաժային սուղապոմպ:

Նախատեսվում է առաջնորդվել տեխ պայմանով, ինչպես նաև քննարկման փուլում է հետևյալ այլընտրանքային լուծումը՝ Ներկայիս իրավիճակում Գ.Հովսեփյան փողոցում մի քանի կառուցապատողների միջոցների հաշվին կառուցվել է կոյուղագիծ հողամասին կից, հնարավոր է միանալ դրան չճանրաբեռնելով Չարենց փողոցի կոյուղագիծը, սակայն քանի որ դեռևս տվյալ կոյուղագիծը հանձնված չէ Վիոլիա Ջուր ՓԲԸ-ին, ուստի որպես հիմնական լուծում չի ներկայացվում:

Հեղեղատար համակարգ, հարթ տանիքներից անձրևի և հալոցքի ջրերը ներքին ջրհոսի ցանցով հեռանում են բակային ցանց, որը միանում է անձրևատար կոյուղու փողոցային հեղեղատարին: -3.90 միջի առաստաղի տակի խողովակներով անձրևաջրերը հեռացվում են դեպի արտաքին համակարգ: Անձրևաջրերի հեռացման համակարգի կանգնակները նախատեսվում է տեղագրել փակ հորաններում, որոնք ստուգիչների մոտ ունեն 400×300 մմ չափերի սպասարկման դռնակներ: Համակարգը նախատեսված է իրականացնել $\delta=150$ մմ պոլիվինիլքլորիդե խողովակներով:

Աղբահեռացում. Շահագործման փուլում աղբահեռացումը կատարվում է Երևան քաղաքի ավագանու 23 դեկտեմբերի 2011թ. «Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը հաստատելու մասին» 360-Ն որոշմամբ սահմանված կարգով: Տեղադրվելու են 6 հատ $1 \times 1,5$ չափերի աղբի տեսակավորման աղբամաններ:

Աղբը նախատեսվում է տեղափոխել Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր տեղափոխել՝ համաձայն կնքվելիք պայմանագրի:



ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի I

45/187545-24

«ՄՈՆԵՐՈՍՍՈ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ՀԱՄԼԵՏ ԶԱՐԳԱՐՅԱՆԻՆ
(Չրենցի փ.12, 53)

Հարգելի՛ պարոն Զարգարյան,

Ի պատասխան Ձեր 14.11.2024 թվականի Դ-145014-24 դիմումի, տեղեկացնում եմ, որ Երևան քաղաքում շինարարական աշխատանքներից, բնակարանների վերանորոգումից, շենքերի վերակառուցումից և քանդումից առաջացած շինարարական, ինչպես նաև օգտագործման պիտանելիությունը կորցրած խոշոր եզրաչափի կենցաղային իրերի թափոնները թույլատրվում է տեղափոխել Սիլիկյան թաղամասին հարող նախկին քարհանքի անօգտագործելի խորշերի տարածք և Էրեբունի վարչական շրջանի Նուբարաշենի խճուղի 4 հասցեին հարող աղբի տեղադրման վայր:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ԱՐՄԵՆ ԿԱՐՈՅԱՆ

X

Կայտ՝
Արքայախճուղի և Կոնստանդին Գաբրիել
Շեն, ՍԻ 014 178

Բարեկարգում և կանաչապատում. Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Բակային հատվածում նախատեսվում են նաև խաղահրապարակներ, հանգստի ակտիվ և պասիվ գոտիներ, ճեմուղիներ, զրուցարաններ, կանաչապատ պուրակ:

Կանաչապատում. Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կառուցապատումից ազատ տարածքի բարեկարգում և կանաչապատում՝ 2978 քմ մակերեսով՝ 41,6%: Կանաչապատումը կատարվելու է Երևանի համայնքապետարանի կողմից համաձայնեցված կանաչապատման նախագծին համապատասխան: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ:

Բույսերի սպեցիֆիկացիա

Բարձր ծաղկանոց թիվ 1, 50Մ2		Բարձր ծաղկանոց թիվ 2, 4Մ2		Բարձր ծաղկանոց թիվ 3, 15Մ2	
Քանակ	Անուն	Քանակ	Անուն	Քանակ	Անուն
		1 հատ	- Chaenomeles speciosa	2 հատ	- Chaenomeles speciosa
17 հատ	- Skimmia japonica 'Pink dwarf'	1 հատ	- Skimmia japonica 'Pink dwarf'	5 հատ	- Skimmia japonica 'Pink dwarf'
14 հատ	- Buxus microphylla 'Faulkner'	1 հատ	- Buxus microphylla 'Faulkner'	4 հատ	- Buxus microphylla 'Faulkner'
8 հատ	- Berberis thunbergii Bagatelle	1 հատ	- Berberis thunbergii Bagatelle	2 հատ	- Berberis thunbergii Bagatelle
11 հատ	- Spiraea douglasii	1 հատ	- Spiraea douglasii	3 հատ	- Spiraea douglasii
Բարձր ծաղկանոց թիվ 4, 11Մ2		Բարձր ծաղկանոց թիվ 5, 13Մ2		Բարձր ծաղկանոց թիվ 6, 9Մ2	
Քանակ	Անուն	Քանակ	Անուն	Քանակ	Անուն
		1 հատ	- Chaenomeles speciosa	1 հատ	- Chaenomeles speciosa
4 հատ	- Skimmia japonica 'Pink dwarf'	4 հատ	- Skimmia japonica 'Pink dwarf'	3 հատ	- Skimmia japonica 'Pink dwarf'
3 հատ	- Buxus microphylla 'Faulkner'	4 հատ	- Buxus microphylla 'Faulkner'	2 հատ	- Buxus microphylla 'Faulkner'
2 հատ	- Berberis thunbergii Bagatelle	2 հատ	- Berberis thunbergii Bagatelle	1 հատ	- Berberis thunbergii Bagatelle
3 հատ	- Spiraea douglasii	3 հատ	- Spiraea douglasii	2 հատ	- Spiraea douglasii
Բարձր ծաղկանոց թիվ 7, 20Մ2		Բարձր ծաղկանոց թիվ 8, 16Մ2		Բարձր ծաղկանոց թիվ 9, 6Մ2	
Քանակ	Անուն	Քանակ	Անուն	Քանակ	Անուն
2 հատ	- Chaenomeles speciosa	2 հատ	- Chaenomeles speciosa	1 հատ	- Chaenomeles speciosa
7 հատ	- Skimmia japonica 'Pink dwarf'	5 հատ	- Skimmia japonica 'Pink dwarf'	2 հատ	- Skimmia japonica 'Pink dwarf'
5 հատ	- Buxus microphylla 'Faulkner'	4 հատ	- Buxus microphylla 'Faulkner'	2 հատ	- Buxus microphylla 'Faulkner'
3 հատ	- Berberis thunbergii Bagatelle	3 հատ	- Berberis thunbergii Bagatelle	1 հատ	- Berberis thunbergii Bagatelle
5 հատ	- Spiraea douglasii	4 հատ	- Spiraea douglasii	1 հատ	- Spiraea douglasii
Բարձր ծաղկանոց թիվ 10, 11Մ2		Բարձր ծաղկանոց թիվ 11, 63Մ2		Բարձր ծաղկանոց թիվ 12, 52Մ2	
Քանակ	Անուն	Քանակ	Անուն	Քանակ	Անուն
				5 հատ	- Chaenomeles speciosa
4 հատ	- Skimmia japonica 'Pink dwarf'	21 հատ	- Skimmia japonica 'Pink dwarf'	18 հատ	- Skimmia japonica 'Pink dwarf'
3 հատ	- Buxus microphylla 'Faulkner'	17 հատ	- Buxus microphylla 'Faulkner'	14 հատ	- Buxus microphylla 'Faulkner'
2 հատ	- Berberis thunbergii Bagatelle	10 հատ	- Berberis thunbergii Bagatelle	8 հատ	- Berberis thunbergii Bagatelle
3 հատ	- Spiraea douglasii	14 հատ	- Spiraea douglasii	12 հատ	- Spiraea douglasii
Բարձր ծաղկանոց թիվ 13, 15Մ2		Բարձր ծաղկանոց թիվ 14, 25Մ2		Բարձր ծաղկանոց թիվ 15, 10Մ2	
Քանակ	Անուն	Քանակ	Անուն	Քանակ	Անուն
2 հատ	- Chaenomeles speciosa			3 հատ	- Chaenomeles speciosa
5 հատ	- Skimmia japonica 'Pink dwarf'	9 հատ	- Skimmia japonica 'Pink dwarf'	9 հատ	- Skimmia japonica 'Pink dwarf'
4 հատ	- Buxus microphylla 'Faulkner'	7 հատ	- Buxus microphylla 'Faulkner'	7 հատ	- Buxus microphylla 'Faulkner'
2 հատ	- Berberis thunbergii Bagatelle	4 հատ	- Berberis thunbergii Bagatelle	4 հատ	- Berberis thunbergii Bagatelle
3 հատ	- Spiraea douglasii	6 հատ	- Spiraea douglasii	6 հատ	- Spiraea douglasii

Կանաչապատման սխեման



Տանիքի նախագիծ





Բարելավան սիտմա



Մտորն ներկայացվում է գլխավոր հատակագիծը՝




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԼԵՂՆԵՐ	
	Լախագիծի հողատարածք Քաղաքի Ա.Պոլսեպետյան փողոցի №52/5 հողամաս
	Ճանապարհային ցանց

	Կոորդինատները		Գծային չափերը (մետր)
	X	Y	
1	8460576.6362	4449387.7669	0.06
2	8460576.5904	4449387.7986	60.00
3	8460526.3354	4449420.5773	28.00
4	8460512.0775	4449396.4794	28.00
5	8460497.8200	4449372.3820	4.78
6	8460495.3850	4449368.2666	39.91
7	8460479.2544	4449331.7621	23.94
8	8460468.2265	4449310.5177	0.94
9	8460467.7947	4449309.6857	56.93
10	8460520.3554	4449287.8154	0.44
11	8460520.7721	4449287.9546	0.78
12	8460521.5040	4449288.2297	1.35
13	8460522.6094	4449288.8576	1.27
14	8460523.6896	4449289.6546	1.43
15	8460524.6392	4449290.7262	1.06
16	8460525.2232	4449291.6108	0.88
17	8460525.6055	4449292.4055	49.15
18	8460546.6358	4449336.8261	5.19
19	8460549.2662	4449341.2960	26.95
20	8460562.9428	4449364.5155	26.98
1	8460576.6362	4449387.7669	26.98




Շինարարական մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՄՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետևյալ և հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 42 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:



13. Շինարարական տեխնիկայի շարժման գրաֆիկ

Անվանումներ	Ընդհանուր տեվոդությունը 42 Ամիս													
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Բուլդոզեր		■											■	
Էքսկավատոր		■												
Տոփանիչ		■	■										■	
Աշտարակային կոունկ		■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
Ինքնաթափ ավտոմոբիլ		■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
բետոնեխոխարիչ ավտոմոբիլ														



Համաձայն շինաշխատանքների հատակագծի շինարարական մեքենաները կայանվելու են հողատարածքի հյուսիսային կողմում (տես նաև ՇԱԿ-ի թերթ ՇԿ-10): Մեքենաների անվադողերի լվացման վայրը նախատեսված է շինհրապարակի մուտքային և ելքային կետերում:

Նախատեսվում է շինաշխատանքներից առաջացած բետոնաջրերը և կեղտաջրերը **հավաքել** ժամանակավոր հորում տեղադրված կեղտաջրերի հեռացման տարայում (≤ 5 մ³): Տարայում հետերոզեն մասնիկների նստեցումից հետո պարզված ջուրը օգտագործել շին աշխատանքներում, իսկ հետերոզեն զանգվածը՝ որպես շին աղբը տեղափոխել աղբավայր: Նախատեսվում է 2 մուտք դեպի շինհրապարակ նվազագույն հեռավորությունը կազմում է 6մ, միջտարածության չափը 6մ:

1.3.2 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շինմոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգներով:

Շինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

Հողային աշխատանքները նախատեսվում է իրականացնել մեքենայացված եղանակով՝ Caterpillar 330 CL տիպի էքսկավատորով, դժվար հասանելի մասերում՝ ձեռքով:

Հանված գրունտը կարճաժամկետ կպահվի շինհրապարակում հետո կօգտագործվի ետլիցքի նպատակով, մյուս զգալի մասը՝ անմիջապես բարձում են ավտոինքնաթիփերը և տեղափոխվում Երևան քաղաքի կողմից հատկացված վայր:

Ետլիցքը անհրաժեշտ է իրականացնել շերտային տոփանմամբ ծանր տոփանիչներով, հիմնային շերտը առաջարկվում է ամրացնել գլղոնով խորանարդային գրտնակով կամ տոփանիչներով, իսկ շինարարական կոնստրուկցիաների անմիջական մերձակայքում՝ ձեռքի տոփանիչներով:

1.3.3 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձ կռունկի, պահեստավորման մակերեսների տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինություններ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

1.3.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ

ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,

- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից :

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Աշխատանքների բնույթից ելնելով բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի՝ կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների՝ աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ՝ կոշիկ)՝ համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում՝ լուսավորում՝ օդափոխում՝ պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն)՝ սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի՝ արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման՝ հրահանգման ժամանակին և որակով անցկացման՝ անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման՝ արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

1.3.5 Կադրային ապահովում և շինտեխնիկա

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 34 մարդ, որից

Ինժիներատեխնիկական անձնակազմ - 6 մարդ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև:

Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

№№	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Աշտարակային կցովի վերամբարձ կռունկ	Liebherr 150 EC-B8 (120 HC) FR tronik QTZ 125	1
2	Ավտոմոբիլային կռունկ / անհասանելի տեղամասերի, բեռնման, բեռնաթափման համար/	XCMG QY25K	1
3	Ռելսային կռունկ	КБ 403	1
4	Ավտոմոբիլային կռունկ/ կռունկը մոնտաժելու և ապամոնտաժելու համար/	LIEBHERR LTM 1100-42	1
5	Էքսկավատոր	CAT 320	2
6	Գլղոն	CAT CS 563	1
7	Բուկրոզեր	CAT D6R	1
8	Շարժական կոմպրեսոր	Comp air C 76	2
9	Ավտոբետոնապոմպ / գրոյական ցիկլի փուլում/	Merc B. Acrtos 4144D	2
10	Թրթռիչ մակերեսային էլեկտրական	ИВ-91А	3
11	Թրթռիչ խորքային էլեկտրական	ИВ-102А	6
12	Փոխարկիչ թրթռիչների համար	ИВ-4	3
13	Տոփանիչներ պնևմո և ձեռքի		3
14	Փոքր մեքենայացման միջոցներ	կոմպլեկտ	3
15	Ավտոինքնաթափ		ըստ հաշվարկի
16	Ավտոբետոնախառնիչ	Kamaz 58149 z	ըստ հաշվարկի

**Շինարարական գործիքների, հարմարանքների,
հանդերձանքի անվանացանկ**

№№	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Լինգ սովորական	ՈՕ24, ՈՕ28	2
2	Քլունգ		2
3	Կռան		2
4	Հատիչներ (հավաքածու)		6
5	Բանալիների (հավաքածու)		6
6	Սուրճեր (հավաքածու)		6
7	Բահ սովորական		6
8	Բահ թիակային	ՈՐ	10
9	Լինգ-մեխահան	ՈԳ25	1
10	Ակցան		6
11	Հարթաշուրթ դիլեկտորիկ բռնիչներով		6
12	Սաղավարտ		75
13	Երկարաճիտ կիրգե կոշիկներ		16
14	Ապահովիչ գոտի	ГОСТ Р 50849-96	16
15	Կախաճուպան		4
16	Կցողի սանդուղք		6
17	Ձեռնոցներ	Ըստ պահանջի	
18	Ուեսպիրատոր	Лепесток	24
19	Պաշտպանիչ ակնոցներ		24
20	Աղբակուտակիչ		2

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում:

1.3.6 Ելութերի և բնատեսությունների օգտագործում

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր եւ այլն: Բնատեսություններից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

- a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{է.ի.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 28 մարդ

N – ԻՏՍ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 6 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 խմ.օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 1260 օր

$$W_{\text{խ.տ.}} = (28 \times 0.016 + 6 \times 0.025) \times 1260 = 753.48 \text{ խմ/շին. ժամ.}:$$

- b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T \times D, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 2000 քմ,

K_1 – 1 քմ օրական ջրցանի նորմը, 0.0015 խմ,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 1080

D – Ջրցանման քանակը օրվա ընթացքում – 2

$$U_1 = 2000 \times 0.0015 \times 1080 \times 2 = 6480 \text{ խմ/շին. ժամ.}:$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 7233,48 խմ/շին. ժամ:

Բազմաբնակարան բնակելի շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով, որի համար սահմանված կարգով ստացվել է տեխնիկական պայման և լիցենզավորված

կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ:

Շինարարության փուլում ջրցանման համար ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, պայմանագիր կկնքվի համապատասխան մատակարար կազմակերպության հետ (նշված գործընթացը հնարավոր կլինի կազմակերպել շինարարության թույլտվության ստացումից հետո):

Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ:

Գազամատակարարումը համաձայն տեխնիկական պայմանի կիրականացվի:

Շինարարական փուլի ազդեցությունը և մեղմող միջոցառումները

Օդային ավազան.

Բնակելի համալիրի շինարարության ընթացքում կառաջանան մի շարք նյութերի արտանետումներ: Հիմնական արտանետումը՝ փոշին, կառաջանա հողի փորման, բեռնման և տեղափոխման ընթացքում: Շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ կառաջանան նաև դիզվառելիքի այրման արգասիքներ՝ ազոտի, ծծմբի և ածխածնի օքսիդներ, պինդ մասնիկներ:

ա) Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումները

Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումների հաշվարկը կատարվել է ըստ “ВРЕМЕННОЕ МЕТОДИЧЕСКОЕ ПОСОБИЕ ПО РАСЧЕТУ ВЫБРОСОВ ОТ НЕОРГАНИЗОВАННЫХ ИСТОЧНИКОВ В ПРОМЫШЛЕННОСТИ СТРОИТЕЛЬНЫХ МАТЕРИАЛОВ”, Минпромстрой СССР, 1987:

$Q_1 = (P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times G \times 10^6 \times B \times P_6) / 3600$ տ/ժամ (բանաձև 1), որտեղ

P_1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է գրունտերում, 0.05

P_2 – 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու ատրոգում, 0.02

P_3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու միջին արագությունը, 1.0

P_4 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.4 (հաշվի առնելով նաև ջրցանը)

P_5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.4 P_6

- գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.5

G – հանվող գրունտի և հողի քանակը՝ 23197մ³ ամբողջ շինարարության ընթացքում, կամ 37115,2 տ:

Շինարարական աշխատանքները իրականացվելու են 42 ամիս, որից հողային աշխատանքները՝ 4 ամիս, կամ 120 օր:

$$G = 37115,2 \text{ տ} : 120 \text{ օր} : 8 \text{ ժամ/օր} = 38,7 \text{ տ/ժամ:}$$

$$Q_1 = (0.05 \times 0.02 \times 1.0 \times 0.4 \times 0.4 \times 38,7 \times 10^6 \times 0.5 \times 1.0) / 3 \text{ 600} = 0.86 \text{ գ /վրկ:}$$

Արտանետումների քանակը շինարարական աշխատանքների արդյունքում կկազմի՝

$$0.86 \text{ գ/վրկ} \times 120 \text{ օր} \times 8 \text{ ժամ} \times 3 \text{ 600 վրկ/ժամ} : 1 \text{ 000 000 գ/տ} = 2,97 \text{ տ:}$$

Վնասակար նյութերի արտանետումներ են սպասվում նաև շինարարական և տրանսպորտային միջոցների շահագործման ժամանակ, վառելիքի այրման ընթացքում:

Վառելանյութի օգտագործումը

Վառելանյութը կարող է օգտագործվել մեքենաների և բեռնատարների շահագործման, ըստ շինարարական գործունեության պահանջի: Հիմնականում օգտագործվելու է դիզելային վառելիք:

Մեքենաների և բեռնատարների վառելիքի ծախսը կարող է տարբերվել, կախված մեքենայի տեսակից, տատանվելով 80-90լ/օր սահմաններում, ամբողջ շինարարության ընթացքում վառելիքի հաշվարկային ծախսը կկազմի 10800 լ կամ 9,18 տ:

Վառելանյութի պահպանման համար պետք է հատկացվի հատուկ տարածք: Տարածքը պետք է ունենա բետոնե հարթակ և արտահոսքերի հավաքման համակարգ:

բ) Դիզելային վառելիքի այրման արգասիքները

Դիզ.վառելիքի հետ կապված արտանետումները հաշվարկվում են «Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման» մեթոդական հրահանգի հիման վրա:

Ըստ նշված մեթոդակարգի ծանր ավտոտրանսպորտի և տեխնիկայի տեսակարար արտանետումները բերված են ստորև աղյուսակ 17-ում:

Աղյուսակ 17: Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NO _x	CH	ՑOU	CO	N ₂ O	CO ₂	ՊՄ
Դիզելային վառելիք	42.3	0.243	8.16	36.4	0.122	3138	4.3

Հաշվի առնելով, որ տարածքում աշխատելու են նոր գնված տեխնիկական միջոցներ, պարկի տարիքի հետ կապված գործակիցները չեն կիրառվում:

Վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումները բերված են աղյուսակ 18-ում, որում միավորվել են ածխաջրածինները, ազոտի օքսիդները:

Աղյուսակ 18: Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը

Ավտոմեքենայի կատեգորիան	Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները, տ/շին.ժամ
Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ	CO	36.4	2.53
	Ածխաջրածիններ	8.403	0.58
	NO _x	42.422	2.95
	Մուր	4.3	0.3

Ծծմբային անհիդրիդ

Ծծմբային անհիդրիդի (SO₂) արտանետումները հաշվարկվում են ելնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է SO₂-ի: Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

$ESO_2 = 2 \sum ks_b$, որտեղ`

ks-ը վառելիքում ծծմբի միջին պարունակությունն է` 0.002 տ/տ

b –ն վառելիքի ծախսն է` 9,18 տ/շին.ժամանակ:

$SO_2 = 2 \times 9,18 \times 0.002 = 0.037$ տ:

Ընդամենը շինարարական փուլում առաջացող արտանետումների քանակները բերված են աղյուսակ 19-ում:

Աղյուսակ 19: Շինարարության փուլի արտանետումները

N	Արտանետվող նյութի անվանումը	Արտանետումը, տ/շին.ժամ
1	Անօրգանական փոշի	2,97
2	Ածխածնի օքսիդ	2.53
3	Ածխաջրածաններ	0.58
4	Ազոտի երկօքսիդ	2.95
5	Մուր	0.3
6	Ծծմբային անհիդրիդ	0,037

Հաշվի առնելով նախատեսվող գործունեության բնույթը, օդի աղտոտման մակարդակը գնահատվում է որպես ցածր: Ազդեցությունը ավելի նվազեցնելու նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի և հանվող գրունտի ջրցան, շինարարական տեխնիկան և ավտոմեքենաները պարբերաբար կստուգվեն և շարժիչները կկարգաբերվեն:

Շահագործման փուլ

Արտանետման աղբյուր է հանդիսանում շահագործման փուլում գազով աշխատող կաթսան, որի ծախսը տարեկան կազմում է 150իսմ:

Արտանետումների հաշվարկ

Կաթսայատնում բնական գազի այրման ժամանակ մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկը կատարվել է համաձայն «Մինչև 5.8 ՄՎտ դրվածքային հզորությամբ պինդ, հեղուկ և գազային վառելիքով աշխատող կաթսայատների վնասակար նյութերի արտանետումների հաշվարկի» մեթոդական ցուցումների:

Ըստ այդ մեթադակարգի բնական գազի այրման ժամանակ արտանետումների տեսակարար գործակիցները բերված են ստորև.

<i>Վնասակար նյութը</i>	<i>Չափման միավորը</i>	<i>Արտանետման տեսակարար գործակիցը</i>
Ազոտի երկօքսիդ	գ/կվտ.ժ	0.252
Ածխածնի օքսիդ	գ/կվտ.ժ	0.108

Գազի առավելագույն ծախսը կազմում է՝ 150 մ³/տարի:

«Գազպրոմ-Արմենիա» ՓԲԸ տվյալներով ՀՀ ներկրվող բնական գազի միջին ջերմատվությունը կազմում է՝ 9.3 կՎտ.ժ:

$$150\text{մ}^3 \times 9.3 \text{ կՎտ.ժ/մ}^3 = 1395 \text{ կՎտ.ժ}$$

Ստորև արտանետումների հաշվարկների արդյունքները կաթսայատան համար.

<i>Վնասակար նյութը</i>	<i>Ջերմության ցուցանիշը, կՎտ.ժ</i>	<i>Արտանետումները,</i>	
		<i>գրամ/տարի</i>	<i>տ/տարի</i>
Ազոտի երկօքսիդ	1395	351,54	0.00035
Ածխածնի օքսիդ	1395	150,66	0.00015

Վերը նշված աղյուսակից երևում է բոլոր արտանետումները չեն գերազանցի սահմանային նորմերը և կգտնվեն թույլատրելի նորմերում:

Բացի վերոնշյալից նախատեսվում է իրականացնել փոշու ելակետային և ընթացիկ գործիքային չափումներ, քանի որ գործունեության տարածքին մոտ կան բնակելի շինություններ: Փոշու գործիքային չափումների կետերը պետք է որոշվեն, իսկ մեթոդոլիգան պետք է մշակվի նախօրոք (մինչ շին.աշխատանքների սկիզբը): Չափումները պետք է իրականացվեն՝ փոշու մակարդակները ֆիքսելու և ցանկացած փոփոխություն արձանագրելու նպատակով: Դա թույլ կտա անընդհատ հետևել և լավ վիճակում պահպանել օդի որակը, իսկ անհրաժեշտության դեպքում անմիջապես իրականացնել համապատասխան միջոցառումներ՝ փոշու մակարդակի նվազեցման համար: Մանրամասները ներկայացված են ԲԿՊ-ում:

1.1.1. Ջրային ավազան

Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և արտադրական հոսքաջերի հեռացման համար կտեղադրվեն շարժական բիոզուգարաններ՝ լվացարանով: Բիոզուգարանների մաքրումը կկատարվի մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվելու է միայն աշխատողների խմելու նպատակների համար: Քանի որ տեղում կենցաղային հարմարություններ չեն նախատեսվում, աշխատողների կացությունը կազմակերպվելու է հարակից համայնքներում, յուրաքանչյուր օր անձնակազմը վերադառնալու է կացության վայր, որտեղ էլ կապահովվի բոլոր անհրաժեշտ սանիտարա-հիգիենիկ պայմանները:

1.1.2. Թափոնների կառավարում

Նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, տարածքում առաջացող երկու տեսակի թափոնները կարող են բացասաբար անդրադառնալ շրջակա միջավայրի վրա:

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/, որը կհավաքվի աղբամաններում և պարբերաբար կտեղափոխվի համայնքային կոշտ կենցաղային թափոնների աղբավայր:

Շինարարական աղբը /ծածակագիրը՝ 9120060101004/ ըստ առաջացման կտեղափոխվի համայնքի կողմից հատկացված վայր:

Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտի բոլոր սպասարկման աշխատանքները, քայուղերով և վառելիքով լիցքավորումը կիրականացվի մասնագիտացված կայաններում, ինչը թույլ կտա բացառել վտանգավոր թափոնների առաջացումը:

Քանի որ, շինարարական տեխնիկան և ավտոտրանսպորտը կսպասարկվեն ավտոսպասարկման կայաններում, այլ թափոնատեսակներ տարածքում չեն առաջանա: Այնուամենայնիվ, ֆորս-մաժորային իրավիճակներում հնարավոր արտահոսքերից խուսափելու համար բոլոր տեսակի յուղերը և քայուղերը (կոմպրեսորային յուղ, արդյունաբերական յուղ և այլն) հավաքվելու և պահպանվելու են գործունեության տարածքում առանձնացված փակ սենյակում և տրամադրվելու են լիցենզավորված կազմակերպության՝ հետագա միջոցառումների իրականացման համար: Տեղափոխությունը ևս կիրականացվի լիցենզավորված կազմակերպության կողմից:

Կարևոր է նաև հաշվի առնել, որ տարածքում առկա են որոշ նյութեր, որոնք գործունեության իրականացման ընթացքում պետք է հեռացվեն տարածքից: Այդ նյութերը կհավաքվեն համապատասխան վայրում և կտեղափոխվեն համայնքի կողմից տրամադրված վայր՝ ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան: Այն նյութերը, որոնք պիտանի են օգտագործման, կտրամադրվեն ՀՀ Պետական Գույքի Կոմիտեին:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է Երևան քաղաքի հյուսիս-արևելյան մասում, Նորք Մարաշ վարչական շրջանի Գ.Հովսեփյան 52/5 հասցեում, այն

նախկինում կառուցապատված չէ: Մոտակա բնակելի և հասարակական շենք շինությունները գտնվում են շուրջ 20մ և ավել հեռավորության վրա:

Ժողովրդագրական կազմ ու բնակչություն

Երևան, քաղաք տեղակայված է Հրազդան գետի երկու ափերին: Հանդիսանում է պետության մայրաքաղաքն ու խոշորագույն բնակավայրը, վարչաքաղաքական, տնտեսական կենտրոնը: Համաձայն Հայաստանի պաշտոնական տեղեկատվության՝ 2014 թվականի հունվարի մեկի դրությամբ ունի 1.091.700 բնակիչ: Բնակչությունը աշխատում է արտադրական, էներգետիկ և այլ օբյեկտներում: Իրականացվում են մեծ ծավալի քաղաքաշինական ծրագրեր:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը իրենից ներկայացնում է Նորքի հրաբխային սարահարթի մի հատված:

Հիդրոերկրաբանական տեսակետից գրունտային ջրերը գտնվում են մեծ խորությունների վրա, դա պայմանավորված է բազալտների բարձր ճեղքավորվածությամբ և հրաբխային խարամի բարձր ջրաթափանցելիությամբ: Ուսումնասիրվող տարածքն աղքատ է գրունտային ջրերից: Տեղամասում փորված հորատանցքերով /17մ/ ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ արխիվային նյութերի հրաբխային սարահարթի սահմաններում դրանք գտնվում են մեծ խորությունների վրա: Շինարարական տեղամասի ջրաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարության համար:

Տիգրիկաերկրաբանական վտանգավոր պրոցեսները և երևույթները որոնք կարող են ազդեցություն ունենալ նախագծվող կառույցի նորմալ գործնեության վրա բացակայում են:

Երևան, քաղաք տեղակայված է Հրազդան գետի երկու ափերին: Հանդիսանում է պետության մայրաքաղաքն ու խոշորագույն բնակավայրը, վարչաքաղաքական, տնտեսական կենտրոնը: Համաձայն Հայաստանի պաշտոնական տեղեկատվության՝ 2014 թվականի հունվարի մեկի դրությամբ ունի 1.091.700 բնակիչ: Բնակչությունը աշխատում է արտադրական, էներգետիկ և այլ օբյեկտներում: Իրականացվում են մեծ ծավալի քաղաքաշինական ծրագրեր:

Կից գտնվում են հասարակական շենքերով ծանրաբեռնված և կառուցապատումից ազատ հողամասեր:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

Տարածքում բնության և պատմամշակույթային հուշարձաններ չկան:

Ծառաթուփային բուսականությունը համալիրի համար կառուցապատման տարածքում բացակայում է:

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Անանուն բազալտներ	սյունաձև	քաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում, Սբ. Սարգիս եկեղեցու մոտ
Անանուն բազալտներ	սյունաձև	քաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում մանկական ե/գ տանող թունելի արմ ճակատամուտքի մոտ

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է մոտ 3 կմ և ավել հեռավորության վրա:

Նորք Մարաշ վարչական շրջանում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Գյուղատեղի	11-14 դդ.	Նորքի հին գերեզմանոցից հս
Խաչքար	1551 թ.	Նորքի փ. 121
Հեռուստակենտրոն. Հին մասնաշենքը	1955-1957 թթ.	Գ. Հովսեփյան փ. 26
Փողոցի կառուցապատման	19 դ. վրջ - 20 դ. սկզբ	Նորքի փ.
հուշարձան	կառուցված	վայր, հասցե
հատվածներ. Նորքի փողոցը		
Բնակելի տուն	1914 թ.	Նորքի փ. 105
Բնակելի տուն	1888 թ.	Նորքի փ. 116
Բնակելի տուն	1852 թ.	Նորքի փ. 137
Բնակելի տուն	19 դ. կես	Նորքի փ. 139

Բնակելի տուն	19 դ. կես	Նորքի փ. 143-145
Բնակելի տուն Դիլանյանի	1886 թ.	Նորքի փ. 151
Բնակելի տուն Դիլանյանի	1883 թ.	Նորքի փ. 1-ին նրբ 1
Դպրոցի շենք. Նորքի ծխական դպրոցը	19 դ. վրջ - 20 դ. սկզբ	Նորքի փ. 74

2.2 ԿԼԻՄԱՆ

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Արաբկիր» օդերևութաբանական կայանի տվյալների:

Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան $-20,6$ °C, բացարձակ մաքսիմումը հասնում է $+41,9$ °C:

Օդի հարաբերական միջին տարեկան խոնավությունը կազմում է 61 %:

Տարեկան տեղումների քանակը 354մմ:

Օդի միջին ջերմաստիճանները ըստ ամիսների Երևան քաղաքի հարավային արդյունաբերական շրջանի համար բերված է ստորև աղյուսակում «Շինարարական կլիմայաբանություն ՀՀՇՆ 22-01-2024» տվյալների համաձայն:

Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

Օդերև-ութաբ. կայանը	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Երևան «Արաբկիր»	-2.7	-0.2	5.8	11.9	16.6	21.3	24.9	24.7	20.4	13.7	6.6	0.2	11.9	-20.6	41.9

Օդի հարաբերական խոնավությունը

Օդերև-ութաբ. կայանը	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
														Միջին ամսական	Միջին ամսական ժ. 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական ժ. 15-ին
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12					
Երևան «Արաբկիր»	77	70	60	57	57	52	50	50	51	60	68	77	61	77	68	50	37

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը սպրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ	
	Ըստ ամիսների														Տարեկան
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Երևան «Արաբկիր»	28	31	38	52	54	27	18	8	13	29	29	27	354	153	201
	25	28	44	34	47	47	34	22	47	34	48	26	48		

Քամի

Բնակավայր, օդերևույթաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ձնծուս, (հ Պա)	Սափսներ	Կրկնէլիությունը, % ըստ ուղությունների								Միջին ամսական	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով(>15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների ընթացքում					
			Միջին արագություն, մ/վ											Անողությունների կրկնէլիություն, %	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով(>15մ/վ) օրերի քանակը	20	50	100
			Հյուսիսայն (Հս)	Հյուսիս-Արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ-Արևելյան (ՀվԱրմ)	Հարավ (Ավ)	Հարավ-Արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)							20	50	100
Երևան «Արաբկիր»	889,7	հունվար	13	29	8	7	14	20	6	3	45	0,9	2,0	30	20	23	25		
			1,9	1,9	1,6	1,7	1,8	1,5	1,8	1,9									
		ապրիլ	15	29	6	8	12	17	9	4	15	2,1							
			3,1	2,6	2,3	2,2	2,5	2,4	2,5	2,5									
		հուլիս	28	32	3	3	8	16	7	3	13	3,4							
			6,0	4,8	1,7	1,7	1,7	1,7	2,0	2,6									
		հոկտեմբեր	17	37	6	5	10	16	6	3	19	1,8							
			2,9	2,5	2,0	1,9	1,7	1,9	1,9	2,0									



2.3 Օղային ավազան


Երևան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ (Էկոմոնիտորինգ) կողմից:

Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան (№1, №2, №7, №8, №18), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ նմուշառում, իսկ մնացած 3 դիտակայանում (№1, №7, №8)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:


Սույն ՇՄԱԳ-ում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օղային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

2024 թվականի 1-ին եռամսյակում Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹՎ-ները:





Գծապատկեր 15. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 22. Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

Ստորև ներկայացվում է Երևան քաղաքի մթնոլորտային օդն աղտոտող վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (հնգամյա միջին), որոնք հրապարակված են «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայքում (<http://meteomonitoring.am/page/1591>):


ՀՀ ՈՐՈՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴՆ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՖՈՆԱՅԻՆ ԿՈՆՑԵՆՏՐԱՅԻԱՆԵՐ (ՀՆԳԱՄՅԱ ՄԻՋԻՆ)

Քաղաք	Աղտոտող նյութ	Միջին հնգամյա կոնցենտրացիա (Ֆոն), մգ/մ ³
Երևան	Ազոտի երկօքսիդ	0.026
	Ծծմբի երկօքսիդ	0.017
	Ածխածնի օքսիդ	1.5
	Փոշի	0.142

Ժամանակավոր առաջարկություններ «Վնասակար նյութերի Ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները»


Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ (SO ₂)	Ազոտի երկօքսիդ (NO ₂)	Ածխածնի օքսիդ (CO)
50 -100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8






Երևանում մթնոլորտային օդի որակը հունվարի 15-21-ը (2025թ.)


Փոշի, մկգ/մ³
(Dust, μg/m³)



Ազոտի երկօքսիդ (NO₂), մկգ/մ³
 Nitrogen dioxide (NO₂), μg/m³



Ծծմբի երկօքսիդ (SO_2), մկգ/մ³
Sulfur dioxide (SO_2), $\mu\text{g}/\text{m}^3$



2.4 Ջրային ռեսուրսներ

«Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշմամբ ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 6 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես պարբերական մոնիթորինգի է ենթարկվում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոլեկտրաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, որի տվյալները 2023 թ 4-րդ եռամսյակի ամփոփ տեղեկագրից բերված են ստորև:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը տեղակայված է Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքում:

Մակերևութային ջրերի որակ Հրազդանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում: Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Գետառ գետի ջրի որակը գետաբերանում հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

2.5 Հողերի նկարագիրը

Հողերը

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ❖ Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային

❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

2.6 Հիմնային աշխատանքներ

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հիմքերի փորման աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 23197 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքներ: Հանվող 20256 խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հատկացված վայր:

Համաձայն տարածքում իրականացրած ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների տվյալների հողի բերրի շերտը բացակայում է:

Կենսաբազմազանություն

Բուսական աշխարհ: Նախատեսվող գործունեության տարածքը բուսաաշխարհագրական տեսակետից պատկանում է Երևանի ֆլորիստիկ շրջանին, որին սովորաբար յուրահատուկ են կիսաանապատային եւ անապատային բուսածածկույթը, տարածքի հարեւանությամբ հանդիպող սակավ բուսատեսակները հիմնականում քսերոֆիտներ (չորասերներ) են: Ընդհանուր առմամբ, Երևանի ֆլորիստիկ շրջանին բնորոշ, քսերոֆիտ, օշինդրային կիսաանապատների բուսածածկ ոչ բնակելի, ոչ արտադրական, բնական բուսածածկով տարածքներում կարող է աչքի ընկնել տեսակային հարուստ բազմազանությամբ: Որպես կանոն, այս տեսակները տարածված են ոչ աղակալված, մակերեսային քարքարոտ գորշ հողերի վրա եւ ներկայացված են օշինդրաէֆեմերային-կիսաանապատային եւ հալոֆիլ-անապատային տիպերով: Օշինդրային կիսաանապատների հիմնական բաղադրիչը օշինդր բուրավետն է (*Artemisia fragrans*), որը մինչեւ 50 սմ բարձրության, փայտացած առանցքով կիսաթփիկ է: Այն գարնանը եւ ամռանը պահպանում է իր մոխրագույն տեսքը, աշնանը ծածկվում է մանր դեղին ծաղիկներով: Գարնանը այդ թփերի միջ եւ ընկած տարածությունը զբաղեցնում են էֆեմերները՝ *Ceratocephalus falcatus*, *Ziziphora tenuiflor*, *Ziziphora persica*, *Alyssium desertorium*, *Poa bulbosa*, *Bromus tectorium*, *Lepidium vesicarium* տեսակներով: Հունիսի կեսերին, տեղումների քանակին նվազեցման եւ օդի ջերմաստիճանի բարձրացման հետ այս տեսակները չորանում են:

Սակայն աշնանը տեղումների ավելացման հետ մեկտեղ օշինդրային անապատները վերակենդանանում են, ծաղկում են՝ օշինդրը (*Artemisia*), *Kochia prostrata*,

Noaea mucronata եւ այլ բուսատեսակներ: Ուշ աշնանը եւ ձմռանը հողը ծածկվում է աճող էֆմերների կանաչ գորգով: Երեւանի ֆլորիստիկ շրջանին բնորոշ, Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներից են՝ *Acorus calamus* L. (Խնկեղեգճահճային), *Lepidium lyratum* L. (Նվարդակ քնարածն), *Salsola tamamschjanae* Iljin (Օշան Թամամշյանի), *Astragalus paradoxus* Bunge (Գազտար օրինակ), *Glycyrrhiza echinata* L. (Մատուտակ խոզանավոր), *Rhizocephalus orientalis* Boiss. (Արմատագլխիկ արեւելյան): Նշված բուսատեսակները հանդիպում են Երեւանի ֆլորիստիկ շրջանում, սակայն ծրագրի համար նախատեսված տարածքներում տարածման արեալներ չունեն: Նախնական ուսումնասիրությունների եւ գրականական տվյալների նույնականացման արդյունքում բուն նախատեսվող գործունեության իրականացման տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսեր չեն հայտնաբերվել:

Կենդանական աշխարհ: Նախատեսվող գործունեության հարակից տարածքներին եւ ընդհանուր լանդշաֆտային գոտուն բնորոշ կաթնասունների տեսակային կազմից ամենուրեք հանդիպում են՝ *Mucrotus arvalis* Pall. (դաշտամուկ), մի քանի տեսակ չղջիկներ՝ *Nyctalus noctula* (շեկիրիկնաչղջիկը), *Vespertilio ognevi* (Օգնեւիմաշկեղը), միջատակերներ (*Hemiechinus auritus*, *Mustela nivalis*): Անողնաշար կենդանատեսակներից տարածաշրջանում հանդիպում են՝ *Phytodrymadusa armeniaca* (ծորիղներ), *Nocarodes armenus* (մորեխներ), *Amphicoma eichleri*, *Cantharis araxicola* (բզեզներ), *Zodarion petrobium* (սարդեր): Կարիճներից հանդիպում է միայն *Buttus caucasicus*-ը: Նախատեսվող գործունեության իրականացման տարածից դուրս բնական, տնտեսական գործունեության մեջին տենսիվ ներգրավվածություն չունեցող տարածքներում Կարմիր գրքում գրանցված կենդանիների տեսակներից կաթնասուններից կարող են հանդիպել *Rhinolophus Mehelyi* (Մեհելիիպայտաքիթ), (*Barbastella leucomelas*), Ասիական լայնական չղջիկ, (*Miniopterus schreibersi*) Սովորական երկարաթեւ չղջիկ: Թռչուններից՝ (*Circaetus gallicus*) օձակեր արծիվ, (*Merops persicus*) կանաչ մեղվակերը, սողուններից՝ (*Eumeces schneideri*) Երկարատու սցինկը, առաջավորասիական մաբույա (*Trachylepis septemtaeniata*), (*Zamenis hohenackeri*) Անդրկովկասյան սահնօձ, (*Lanius senator*) կարմրակատար շամփրուկ: Տարածքում

նախնական ուսումնասիրությամբ կարմիր գրքում գրանցված տեսակներ չեն հայտանաբերվել:

տեսակի առանձնյակների հանդիպման դեպքում իրականացնել պահպանության միջոցառումներ հետեվյալի մասով.

Ավրորինա դեղնաթիթեռ (*Colias aurorina* Herrich-Schaffer) խոցելի տեսակ, որն ունի լայն տարածում: Հայտնի է Գեղարքունիքի (ք. Սևան, գ. Շորժա), Կոտայքի (Զրվեժ, Գեղաղիք, Մեղրաձոր, Արզակյան, Գառնի), Վայոց Ձորի (Գնիշիկ), Սյունիքի (Լիճք, Շվանիձոր, Գուդեմնիս, Վանք և Կալեր լքված գ.) մարզեր, Արագած և Արայի լեռներից, «Խոսրովի անտառ» պետական արգելոցից:

Շովիցիա գեղապտուղ (*Szovitsia callicarpa* Fisch. & C.A.Mey.) հազվագյուտ բուսատեսակ է: Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 900-1500 մ բարձրությունների վրա:

Վերը նշված տեսակների առանձնյակների հանդիպման դեպքում նախատեսվում է իրականացնել պահպանության միջոցառումներ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների:

2.7 Թափոնների կառավարում

Երևանի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/՝ 4.08տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 23խմ շինարարական աղբը /ծածակագիրը՝ 9120060101004/, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի քանակը մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տարի

n – աշխատողների թիվն է շինարարության փուլում՝ 34

$$M=34*120= 4080\text{կգ/տարի:}$$

Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չադտոտված հող (ծածկագիրը՝ 31401100 08 99 5) 23197 խմ ծավալով /գրունտների հետլիցք 2941խմ/, իսկ մնացած 20256խմ կտեղափոխվի Երևան համայնքի կողմից տրամադրվող շինարարության թույլտվությամբ սահմանված վայր:

Այլ վտանգավոր թափոններ, որոնք ենթակա են լիցենզավորված որևէ կազմակերպության հանձնման, չեն առաջանալու, մնացած բոլոր առաջացման ենթակա թափոնները խմբավորված են շինարարական աղբ թափոնատեսակի մեջ:

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն ՇՄԱԳ-ում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NO_x):

3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:
- Շինարարական հրապարակը ցանկապատել:

3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության համաձայնեցմանը:
- Տարածքում (նախնական ցանկով) նախատեսվում է տնկել տարածաշրջանին բնորոշ վերը նշված բուսատեսակները:
- Կանաչապատ տարածքների ոռոգման ցանցը նախատեսվում է կաթիլային:
- Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք մոտ 100 խմ, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարության ժամկետը

սահմանված է շինարարության տրամադրումից հետո 42 ամիս, նշված հարցը կհստակեցվի մոտ 42 տարի հետո:

- կանաչապատման աշխատանքներն իրականացնելիս նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման դրույթներով:
- Նախատեսվում է առաջնորդվել հետևյալի դրույթներով՝ ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

3.3.4 ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները

Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախատեսվող գործունեությունը իրականացվելու է ճանապարհին կից հատվածում, որը երկար տարիների ընթացքում արդեն իսկ ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների և որտեղ կենսաբազմազանությունը գրեթե բացակայում է :

Տարածքում հողի բերրի շերտը բացակայում է:

- Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի մաքրում աղբից, կեղտոտված բնահողից, վառելիքաքսուկային նյութերից: Շինարարական աղբը և մնացած թափոնները տեղափոխվելու են տեղական մարմինների կողմից հատկացված աղբավայրեր:
- Կանաչապատումը կիրականացվի առաջնորդվելով ՀՀ կառավարության 2018թ փետրվարի 8-ի N 108-Ն որոշման դրույթներով:

Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ

Ամենամեծ ազդեցությունը կարտահայտվի հողային աշխատանքների ժամանակ դրանց բների ոչնչացմամբ: Սակայն կենդանիները այդ դեպքում առանց մեծ կորուստների կից տարածքներում կգտնեն նոր բների և բնակավայրերի լայն հնարավորություններ:

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ամենաինտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ-մայիս) դուրս:

Ընդհանուր առմամբ, շինարարական աշխատանքները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, ինչի շնորհիվ կենդանիներին հասցվող վնասը կլինի նվազագույն: Շինարարական աշխատանքների բնույթը և մասշտաբը այնպիսին են, որ նրանք իրենց փոքրածավալության պատճառով չեն կարող արգելել կենդանական աշխարհի ներկայացուցիչների սեզոնային միգրացիայի կամ ջուր խմելու ճանապարհները:

3.3.5 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

• Շինարարական աշխատանքների ժամանակ՝

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից /ինչը հանդիսանում է կենցաղային աղբի կազմում թուղթը, պոլիէթիլենե տոպրակներ և այլն/ և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

• Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

• Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

• Նախատեսվող բնակելի համալիրում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների;

• Անվտանգության նկատառումներից ելնելով շին.հրապարակում կտեղադրվեն կողմնակի անձանց մուտքը արգելող նշաններ, և շինհրապարակը կապահովվի լուսավորությամբ:

• Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

3.3.6 ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏՍԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ: Շինարարության ընթացքում շին հրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը հնարավոր է գերազանցի սահմանված նորմերը: Սակայն դա լինելու է ոչ անընդմեջ, ժամանակավոր: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով ՇՄԱԳ-ում նախատեսվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը: Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- - կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում,

- շինարարական աշխատանքներում ներգրավվելու են ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,
- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում,
- պարբերաբար կստուգվեն և կկարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները,
- բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,
- օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,
- պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը, կատարել չափագրում,
- շինհրապարակում աղմուկի մակարդակը գերազանցելու դեպքում աշխատողներին ապահովել ականջակալներով: Շահագործման փուլում շենքում նախատեսվում է.
- օդափոխման և օդի լավորակման համակարգերում աղմուկի խլացուցիչների կիրառում,
- օգտագործվող ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ, թրթռամարիչ նյութերի օգտագործում՝ առաջնորդվելով համապատասխան մարմինների եզրակացություններով:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՂՄՈՒԿԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շենքերը, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչի դեր:

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության սկզբում էկսկավատորը, իսկ ավարտին գլղոնը: Միաժամանակ այս շինտեխնիկան չի շահագործվում: Երկու աղմուկի աղբյուրները կրում են ժամանակավոր բնույթ:

Էկսկավատորը աշխատելու է 4 ամիս աղմուկի մակարդակը՝ LAէկվ, կազմում է 85 դԲ: Գլղոնը տարածքի բարեկարգման ընթացքում՝ 3 ամիս աղմուկի մակարդակը՝ LAէկվ, կազմում է 80 դԲ:

Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ 22-04-2014: Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը՝ ≤ 200 կգ/քմ: Շինության պատերը հանդիսանում են միաժամանակ նաև աղմուկից պաշտպանման էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևյալ բանաձևով.

$$I_{աղ} = 23 \lg m \text{ է} - 10 \text{ դԲ, երբ } m \geq 200 \text{ կգ/քմ}$$

$$I_{աղ} = 13 \lg m \text{ է} - 13 \text{ դԲ, երբ } m \leq 200 \text{ կգ/քմ}$$

Որտեղ $m \text{ է} = Km$ – մակերեսի խտության էկվիվալենտն է,

m – մակերեսի խտությունն է, կգ/մ²,

K – գործակից է, որը հաշվի է առնում պատնեշի խտությունը, որը 200 կգ/քմ

$$K=1,3 \text{ m է} = 1,3 \times 200=260$$

$$L_{աղ} = 13 \lg m \text{ է} - 13 = 18,2 \text{ դԲ}$$

Շինարարական հրապարակից դուրս աղմուկի մակարդակը կկազմի՝

$$LA_{տար} = LA_{էկվ} - L_{աղ} = 85 - 18,2 = 66,8 \text{ դԲ}$$

Հարակից բնակելի շինությունների պատերը, պատուհանները, մուտքի դռները, տանիքը, կանաչապատ տարածքը հադիսանում են որպես պաշպանիչ էկրան: Ձայնամեկուսացումը RԱտ ր ըստ աղույսակ 2՝ կազմում է միջնը 50 դԲ:

$$LA_{տար} = 66,8 - 50 = 16,8 \text{ դԲ}$$

$$Գլղոնի համար LA_{տար} = LA_{էկվ} - L_{աղ} = 80 - 16,8 - 50 = 13,2 \text{ դԲ}$$

Մոտակա բնակելի շինությանների ներսում աղմուկի մակարդակը էքսկավատորի աշխատանքի դեպքում կկազմի 16,8 դԲ, իսկ գլղոնի 13,2 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է: Աշխատանքները իրակացվելու են միայն ցերեկային ժամերին:

Թրթռում

Թրթռման նորմաները բնակելի շենքերում ըստ ՀՀ առողջապահության նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:

Հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակները:

Միջին երկրաչափական հաճախականության օկտավային շերտեր, Հց	Թույլատրելի արժեքները XO YO և ZO առանցքներով			
	Թրթռման արագացում		Թրթռման արագություն	
	մ/վրկ ² .10 ⁻³	դԲ	մ/վ .10 ⁻³	դԲ
2	10.0	80	0.79	84
4	11.0	81	0.45	79
8	14.0	83	0.28	75
16	28.0	89	0.28	75
31.5	56.0	95	0.28	75
63	110.0	101	0.28	75
Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները	10	80	0.28	75
<p>Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով:</p> <p>Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:</p>				

Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով: Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:

Շինարարության ընթացքում թրթռման աղբյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատաքը, որոնց թրթռման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի սահմաններում ալիքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

4. ՄՇՏԱՂԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

